ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/56

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Խաչատուրյանի

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 07.06.2019թ.)

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 07.06.2019թ.)

Էջմիածնի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝

Գ. Հարությունյանի (լիազորագիր, տրված՝ 27.05.2019թ.)

Կ. Խարբերդյանի (լիազորագիր, տրված՝ 27.05.2019թ.)

Դ. Բադալյանի (լիազորագիր, տրված՝ 20.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8643-2019 գրությամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Էջմիածնի համայնքապետարանի 15.05.2019թ. թիվ 1334 գրության հիման վրա, 24.05.2019թ. թիվ 26/26-1/8643-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.06.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

2019թ. ապրիլի 12-ին «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և Էջմիածնի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության միջև կնքվել է «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/2» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Վերոհիշյալ Պայմանագրով աշխատանքների կատարման սկիզբ է նախատեսվել՝ 15.04.2019թ., իսկ ավարտը՝ 07.05.2019թ.:

Մինչդեռ տվյալ Ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ Պայմանագրով աշխատանքների կատարման սկիզբ պետք է լիներ՝ 08.04.2019թ., իսկ ավարտը՝ 30.04.2019թ.:

Վերը նշված պայմանագրերով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է իրականացնել Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման աշխատանքներ:

Պայմանագրերին կից ծավալաթերթերով նախատեսված է գոյություն ունեցող դիտահորերի կափարիչների բարձրացում բետոնացումով, այսինքն հիմնային թաց շինարարական ընթացակարգերով աշխատանքներ:

Վերը նշված աշխատանքների մասով բացակայում են համապատասխան շինարարական աշխատանքների կատարման նախագծեր, որի մասին Ընկերությունը նախազգուշացրել է Պատվիրատուի ներկայացուցիչներին:

Պատվիրատուի կողմից «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին չի տրամադրվել նաև շինարարարության թույլատվություն, ինչպես նաև շինարարության վարման մատյան:

Չնայած դրան, հաշվի առնելով Ընկերության առանձնահատուկ վերաբերմունքը Էջմիածին համայնքի նկատմամբ, առանց վերը նշված փաստաթղթերի «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն սկսել է իրականացնել վերը նշված պայմանագրերով նախատեսված աշխատանքները՝ առանց Պատվիրատուի կողմից համապատասխան փաստաթղթերի տրամադրման:

Սակայն Պատվիրատուն, անհասկանալի պատճառներով արդեն սկսած ս/թ մայիսի 2-ից նախաձեռնել է պայմանագրերի լուծման ընթացակարգեր:

02.05.2019թ-ին Պատվիրատուի կողմից կազմվել է թիվ 1 արձանագրություն անվամբ փաստաթուղթ, որով իբր ստուգվել և գնահատվել է Ընկերության կողմից ստաձնած պայմանագրերով կատարված աշխատանքների ընթացքը: Նշված արձանագրությամբ որոշվել է լուծել «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/2» պայմանագիրը: Նշված արձանագրությունը Ընկերությանը ուղարկվել 10.05.2019թ-ին: Արձանագրությունում նշված է Ընկերության մասակցության մասին, սակայն «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն երբևէ չի ծանուցվել կամ հրավիրվել որևէ ժողովի:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների մեջ են մտել նաև «տաշտակների» փորման աշխատանքներ:

2019թ-ի ապրիլ-մայիս ամիսներին գերակշռել են անձրևային-տեղումնաբեր օրերը: Փորված «տաշտակների» ջրալցման դեպքում նախ նպատակահարմար չէ, ապա նաև Պատվիրատուի ղեկավարության կողմից արգելված է եղել այդ աշխատանքների կատարումը /համապատասխան ապացույցները ներկայացվել են/:

Պատվիրատուի պայմանագրերի լուծման հիմնական շարժառիթը հանդիսացել է այն, որ իբր Ընկերությունը չի կարողանալու պայմանագրերով սահմանված ժամկետներում իրականացնել ասֆալտապատման աշխատանքները: Այնինչ Պատվիրատուի կողմից նախաձեռնված պայմանագրի լուծման ընթացակարգի պատճառով սկսած 02.05.2019թ-ից գրեթե աշխատանք չի կատարվել, այնինչ 12 օրը բավարար էր, որպեսզի աշխատանքները կատարվեին և ավարտվեին:

Բացի վերոգրյալի՝ աշխատանքների ժամանակ առ ժամանակ դադարեցվել են աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողի կարգադրությամբ, քանի որ բացակայում էին նախագծային փաստաթղթերը, ինչպես նաև թերությունների ակտը, համաձայն որի Ընկերության աշխատակիցները կկատարեին կետային աշխատանքներ:

10.05.2019թ-ի դրությամբ Պատվիրատուն հայցվորին չի հանձնել կամ տրամադրել նախագծային փաստաթղթեր և թերությունների ակտ, այսինքն առաջացրել է արհեստական խոչընդոտներ:

Բացի այդ, ելնելով եղանակային պայմաններից և տեղացող անձրևներից՝ հենց ինքը՝ Պատվիրատուն 5 օրով դադարեցրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը /հաստատվել է Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության ներկայացուցչի կողմից սույն ընթացակարգով հրավիրված նիստի ժամանակ/:

10.05.2019թ-ի դրությամբ Պատվիրատուն չի հաստատել 02.05.2019թ-ի աշխատանքների կատարման վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված թիվ 1 Կատարողական ակտը, որում նշված գումարը ենթակա է վճարման ընկերությանը և որը կազմում է 4 105 235 (չորս միլիոն մեկ հարյուր հինգ հազար երկու հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ:

Ընկերությունը վկայակոչել է հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության միջև պայմանագրային հարաբերությունները ձևավորվել են բացառապես գնումների շրջանակներում անցկացված մրցույթների արդյունքում: Պայմանագրերի առարկան է հանդիսացել Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման աշխատանքների կատարումը:

Այսպիսով՝ 2019թ-ի մայիսի 2-ին հայցվորին է հասցեագրվում երկու գրություն, որով տեղեկություն է պահանջվում, թե ինչու են ուշացվում աշխատանքների կատարումը:

Նույն օրը կազմվում է թիվ 1 արձանագրությամբ փաստաթուղթ, որով որոշվում է լուծել պայմանագիրը և 10.05.2019թ-ին հայցվորին են ուղարկվում երկու գրություններ 2 պայմանգերի լուծման մասին:

Ընկերությունը 07.05.2019թ-ին դիմում է ներկայացրել Պատվիրատուին, որով Պատվիրատուին տեղյակ է պահել աշխատանքների ընդհատման, պայմանագրերի երկրաձգման անհրաժեշտության վերաբերյալ:

Ի պատասխան Ընկերության կողմից ներկայացված դիմումի, Պատվիրատուն իր 10.05.2019թ. թիվ 1275 գրությամբ հայտնել է, որ անձրևի, տեղումների պատճառով 2-3 օր չեն կատարվել աշխատանքներ (իրեն վերագրելով կարծես Պատվիրատու ընկերության ղեկավարի պաշտոնը), ապա նաև հայտնել է, որ նպատակահարմար չեն համարում աշխատանքները կատարման ժամկետները երկարաձգել:

Պատվիրատուն դիտավորյալ չի հաստատել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կատարողական ակտը, բնականաբար ի հայտ բերելով իրական կասկածանքներ հետագայում վճարային պարտավորությունից հրաժարվելու վերաբերյալ:

2019թ-ի ապրիլ-մայիս ամիսներին գրանցվել են տեղումների առատություն: 12.04.2019թ-ից առ 10.05.2019թ-նը ակտիվ անձրևային օրերի թիվը 9-ն է, իսկ անձրևային օրերինը ընդհանուր 17-ն է: Բնականաբար անթույլատրելի է փորված տաշտակները, որոնք լցված են անձրևաջրերով, լցնել ասֆալտով: Բնականաբար, գործ կունենանք թերի աշխատանքի հետ: Ի դեպ, ջրալցված փոսերի ասֆալտապատումը արգելված է եղել ինչպես ՀՀ վարչապետի կողմից, այնպես էլ նաև հենց Պատվիրատուի կողմից:

Բացի այդ, արդեն իսկ նշվեց ՀՀ կառավարության 2015թ-ի թիվ 596-րդ որոշման 4-15 կետով սահմանվել է, որ շինարարության (տեղադրման) թույլտվությունը՝ փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի՝ ինչպես նոր կառուցապատման նպատակով սահմանված կարգով տրամադրված հողամասում, այնպես էլ՝ գոյություն ունեցող շենքերում և շինություններում որոշակի շինարարական գործունեություն իրականացնելու կամ ոչ հիմնական շինություն տեղադրելու իրավունքը: Համաձայն Պատվիրատուի հետ կնքված պայմանգրերի՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պետք է կատարեր դիտահորերի բարձրացում բետոնպատմամբ, այսինքն թաց շինարարական աշխատանքների կատարմամբ: Նշված որոշման 117-րդ կետի համաձայն՝ շինարարության (քանդման կամ ապամոնտաժման) թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես սույն կարգով համաձայնեցված ու հաստատված նախագծային փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նշված որոշման 6-րդ կետի տեսանկյունից դիտահորերի բարձրացումը պետք է կատարվի շինթույլտվության պայմաններում, իսկ արդեն ավտոճանապարհի շինարարությունը դիտարկվում է որպես միջին կամ բարձր ռիսկայնության օբյեկտ:

Նախագծային ամբողջ փաստաթղթային փաթեթի տրամադրման պատասխանատուն հանդիսանում է հենց ինքը Պատվիրատուն: Ստացվում է այնպես, որ Պատվիրատուն իր կողմից թույլ տրված բացթողումները փորձում է հարթեցնել պայմանագրերի լուծման ճանապարհով: Դա է պատճառը, որ աշխատանքների կատարման ընթացքում մերթ ընդ մերթ տեխնիկական հսկողը դադարեցրել է աշխատանքները, քանի որ քաղաքաշինական նորմերի տեսանկյունից ստացվում է, որ Պատվիրատուի, կոնկրետ դեպքում Պատվիրատուի մեղքով հայցվորն իրականացնում է ապօրինի աշխատանքներ:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 436-րդ հոդվածի՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

Համաձայն ՀՀ քաղ. Օր. 466-րդ հոդվածի՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Համաձայն ՀՀ քաղ. օր. 468-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում:

Ինչպես նկատում ենք Պատվիրատու կողմը պայմանագրի լուծման նախաձեռնություն է սկսել՝ խախտելով վերը նշված իրավական նորմի պահանջները:

Այսինքն, ըստ էության, Պատվիրատուի գործողություններն ուղղված պայմանագրերի լուծմանը զուտ իրավական տեսանկյունից անթույլատրելի են: Անթույլատրելիության իրավական հիմքերը շարադրվել են սույն հայցում, բացի այդ դրանք զուտ պրոցեսուալ տեսանկյունից անթույլատրելի են նաև ՀՀ քաղ. Օր. 466 և 468-րդ հոդվածների տեսանկյունից: Իսկ պայմանագրերի լուծման Ծանուցումները ոչ իրավաչափ են: Ծանուցումների ոչ իրավաչափությունն ունի և արտաքին և ներքին բնույթ: Ըստ էության ոչ իրավաչափության ներքին բնույթը կայանում է նրանում պարունակվող տեղեկատվության ոչ իրական լինելու մեջ: Արտաքին կողմով Ծանուցումների ոչ իրավաչափությունը կայանում է ՀՀ քաղ. Օր. 466 և 468-րդ հոդվածներով նախատեսված պահանջների խախտվածության մեջ:

Անցնելով Պատվիրատուին 02.05.2019թ-ին ներկայացված Ակտ N 1-ի հաստատմանը, ապա նշենք, որ դրա առ այսօր չհաստատելը, վառ ապացույցն է ստանձնած վճարային պարտավորություններից խուսափելու համար:

Բացի այդ, փետք է փաստել, որ պատվիրատուն փոխելով հրավերով նախատեսված աշխատանքների կատարման ժամանակացույցը՝ խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել

փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Իսկ նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն են:

Այսպիսով, «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/2» ծածկագրով պայմանագրում Պատվիրատուի կողմից կատարվել են գնման առարկայի բնութագիր կազմող /տվյալ դեպքում ձեռքբերման պայման՝ ի դեմս գնման ժամանակացույցի/ այնպիսի փոփոխություններ, որոնք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անթույլատրելի են և նման փոփոխությամբ պայմանագիր կնքվել չէր կարող:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությանն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Այպիսով, «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության միջև կնքված «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/2» ծածկագրով պայմանագիրը կնքվել է ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխան (հակասում է օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասին), իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, ուստի և նշված Պայմանագիրը օրենգրքի 305-րդ հոդվածի ուժով՝ անվավեր է: Միևնույն ժամանակ, քանի որ Պայմանագիրը ՀՀ քաղ. օր-ի 305-րդ հոդվածի ուժով՝ անվավեր է, ուստի և ՀՀ քաղ. օր-ի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերոհիշյալ անվավեր գործարքը չի կարող հանգեցնել իրավաբանական հետևանքների, այդ թվում նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ»

ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու հետևանքի:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը /ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը/ 27.11.2017թ. կայացրած թիվ ՍՑ-ԷՍ-2017/63 և 19.12.2017թ. կայացրած թից ՍՑ-ԷՍ-2017/71 որոշումներով ՀՀ ՊՆ-ի կողմից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի, փոփոխումը և նոր ժամանակացույցի սահմանումը որակել է որպես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, և վերոհիշյալ ուժով «ԴԵԱԳԱ» ՍՊԸ-ն և Ֆ/Ա Իշխան Միրզոյանը չեն ներառվել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Նույն փաստական հանգամանքների շրջանակներում է քննվել նաև ՍՑ-ԷՍ-2017/65 ընթացակարգը, որի վերաբերյալ կայացված որոշմամբ՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը /ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը/ ՀՀ ՊՆ-ի կողմից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի, փոփոխումը և նոր ժամանակացույցի սահմանումը որակել է որպես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում, և վերոհիշյալ ուժով «Զիպեռ» ՍՊԸ-ն չի ներառվել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է փաստել, որ Պատվիրատուի կողմից սույն պայամանագրի շրջանակներում թույլ են տրվել թե ՀՀ օրենսդրության, թե պայմանագրային պարտավորությունների խախտում, որի արդյունքում Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինությունը ոչ իրավաչափ լուծել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը: Մասնավորապես.

1. Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կողմից Պայմանագրում կատարվել են այնպիսի փոփոխություններ (գնման ժամանակացույցի մասով), որոնք արգելված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

2. Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կողմից Ընկերությանը չի տրամադրվել համապատասխան շինարարական աշխատանքների կատարման

նախագծերը, շինարարարության թույլատվությունը, ինչպես նաև շինարարության վարման մատյանը:

3. Նշված փաստաթղթերի, թերությունների մասին ակտի բացակայության, ինչպես նաև եղանակային պայմանների հետևանքով տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությունը պարբերաբար դադարեցրել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող աշխատանքները:

4. Եղանակային պայմանների և տեղացող անձրևների հետևանքով Պատվիրատուն 5 օրով դադարեցրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը /հաստատվել է Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության ներկայացուցչի կողմից սույն ընթացակարգով հրավիրված նիստի ժամանակ/:

5. Նշված պայմաններում պատվիրատուի կողմից մերժվել է Ընկերության խնդրանքը՝ Պայմանագրով նախատեսված ժամկետը երկարաձգելու վերաբերյալ:

6. Պայմանագիրը պատվիրատոի կողմից լուծվել է ՀՀ քաղ. Օր. 466 և 468-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը ու փաստական հանգամանքները և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ի լրումն վերոհիշյալ գրության Ընկերությունը հայտնել է հետևյալը.

2019թ. ապրիլի 12-ին «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության միջև կնքվել է «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/2» ծածկագրով պայմանագիր:

Պատվիրատուի կողմից արդեն ս/թ մայիսի 2-ից նախաձեռնվել է պայմանագրերի լուծման ընթացակարգեր և 02.05.2019թ-ին Պատվիրատուի կողմից կազմվել է թիվ 1 արձանագրություն անվամբ փաստաթուղթ, որով իբր ստուգվել և գնահատվել է Ընկերության կողմից ստանձնած պայմանագրերով կատարված աշխատանքների ընթացքը: Նշված արձանագրությամբ որոշվել է լուծել «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/2» պայմանագիրը:

Նշված արձանագրությունը Ընկերությանը ուղարկվել 10.05.2019թ-ին էլեկտրոնային փոստով: Արձանագրությունում նշված է Ընկերության մասնակցության մասին, սակայն «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն երբևէ չի ծանուցվել կամ հրավիրվել որևէ ժողովի: 10.05.2019թ. պայմանագրի լուծարման վերաբերյալ ծանուցումը ուղարկելուց հետո է կատարվել Պատվիրատուի կողմից չափագրում՝թիվ 2 կատարողական ակտով կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ 2019թ-ի ապրիլ-մայիս ամիսներին գերակշռել են անձրևային-տեղումնաբեր օրերը: Իսկ տվյալ ժամանակաշրջաններում ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը բազմաթիվ անգամ հայտնել է իր դիրքորոշումը՝ ասֆալտապատման աշխատանքները անձրևային եղանակներին չիրականացնելու վերաբերյալ, նման դիրքորոշում է ունեցել նաև Պատվիրատուի ղեկավարությունը, քանի որ հենց իր կողմից նույնպես արգելված է եղել այդ աշխատանքների կատարումը: Վերոհիշյալ փաստը արձանագրվել է նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2019/56 ընթացակարգի հիմքերի քննության վերաբերյալ նշանակված նիստերի ընթացքում, երբ Պատվիրատուի ներկայացուցիչը նիստի սկզբում հայտնեց, որ իրենց միջնորդությամբ ասֆալտապատման աշխատանքները անձրևային եղանակների պատճառով դադարեցվել է գրեթե 5-6 օր, այնուհետև նիստի ընթացքում փոխելով իր կարծիքը այդ օրերի քանակը դարձրեց 1 օր:

Պատվիրատուի պայմանագրերի լուծման հիմնական շարժառիթը հանդիսացել է այն հանգամանքը, որ իբր Ընկերությունը չի կարողանալու պայմանագրերով սահմանված ժամկետներում իրականացնել ասֆալտապատման աշխատանքները:

Այնինչ Պատվիրատուի կողմից նախաձեռնված պայմանագրի լուծման ընթացակարգի պատճառով սկսած 02.05.2019թ-ից գրեթե աշխատանք չի կատարվել, այնինչ 12 օրը բավարար էր, որպեսզի աշխատանքները կատարվեին և ավարտվեին:

Այս փաստը հավաստում է նաև այն հանգամանքը, որ պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար սահմանված 20 օրերից միայն 6 օրն է հնարավոր եղել կատարել ասֆալտապատման աշխատանքներ և այդ 6 օրվա ընթացքում հնարավոր է եղել կատարել աշխատանքների գրեթե 60 տոկոսից ավելին:

Բացի վերոգրյալի՝ աշխատանքների ժամանակ առ ժամանակ դադարեցվել են աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողի կարգադրությամբ, քանի որ բացակայում էին նախագծային փաստաթղթերը, ինչպես նաև թերությունների ակտը, համաձայն որի Ընկերության աշխատակիցները կկատարեին կետային աշխատանքներ:

Վերոնշված փաստը հավաստելու համար մենք քննության վերաբերյալ նշանակված նիստի ժամանակ ներկայացրեցինք բանավոր միջնորդություն տեխնիկական հսկողին ընթացակարգի քննությանը ներգրավելու համար, որը Ձեր կողմից բավարարվեց՝ սակայն ցավոք հնարավոր չեղավ ներգարավել տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերությանը, որը կհավաստեր վերոնշված փաստական հանգամանքը:

Հայտնում ենք նաև, որ ներկա պահին որևէ ասֆալտապատման աշխատանքները չեն իրականացվում և հետևաբար, եթե Պատվիրատուն երկարաձգեր աշխատանքների կատարման ժամկետները գոնե 4-5 օրով, ապա «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն կվերջացներ ամբողջ աշխատանքները և այն կհանձներ Պատվիրատուին:

Կից ներկայացնում ենք պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ընթացքում անձրևային-տեղումնային օրերի վերաբերյալ համապատասխան ապացույց:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը՝ խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը ու փաստական հանգամանքները և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/56 ընթացակարգի շրջանակներում 30.05.2019թ. ժամը 10:35-ին, 10.06.2019թ. ժամը 10:30-ին և 20.06.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 10.06.2019թ. ժամը 10:30-ին և 20.06.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Էջմիածնի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Էջմիածնի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.05.2019թ. թիվ 1334 գրությամբ ներկայացրել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և հայտնել է, որ ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» և «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» ծածկագրերով գնանշման հարցման միջոցով Էջմիածին քաղաքի փողոցների և շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատմանփոսային նորոգման աշխատանքների կատարման նպատակով գնման ընթացակարգերի 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն , որի հետ 12.04.2019թ. կնքվել է «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» և 15.04.2019թ. «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» ծածկագրերով պայմանագրերը, սակայն «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» պայմանագրում նշված աշխատանքները կատարվել են մասամբ և կապալառուն խախտել է պայամանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը), իսկ «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» պայմանագրով նախատեսված ժամկետում չի սկսել և չի ավարտել աշխատանքները: Նշվածի հիմքով համաձայն պայմանագրի 3.1.4 կետի ա), բ) ենթակետերի՝ միակողմանի լուծվել է 12.04.2019թ. «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» և 15.04.2019թ. «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» ծածկագրերով պայմանագրերը:

Պատվիրատուն հիմք ընդունելով վերոգրյալը առաջնորդվելով Կարգի 45-րդ կետով խնդրել է Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/56 ընթացակարգի շրջանակներում 30.05.2019թ. ժամը 10:35-ին, 10.06.2019թ. ժամը 10:30-ին և 20.06.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշման

դեմ հայտնելով, որ Ընկերությունը պայմանագրերով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով և ժամկետներում չի կատարել Էջմիածին քաղաքի փողոցների շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքները: Ըստ հանձնման-ընդունման ակտի՝ կատարվել է աշխատանքների 1/2-րդ մասը, իսկ «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» ծածկագրով պայմանագրով աշխատանքներ ընդհանրապես չեն կատարվել: Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ քանի որ Ընկերության կողմից աշխատանքները փաստացի չեն կատարվել և պայամանագրի կատարման փուլում դրսևորվել է անբարեխիղճ վերաբերմունք, ուստի Պատվիրատուն գտել է, որ նման պայմաններում պայմանագրի երկարացման վերաբերյալ խոսք անգամ չէր կարող գնալ: Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից հնչեցված այն տեսակետին, որ Պատվիրատուի աշխատակիցը բազմիցս խոչընդոտել է Ընկերության կողմից աշխատանքները կատարելուն, ապա Պատվիրատուն հայտնել է, որ նման պնդումները հիմնազուրկ են, քանի որ Ընկերության կողմից առկա չէ Պատվիրատուին կամ տեխնիկական հսկողին ուղղված որևէ գրավոր փաստաթուղթ աշխատանքների խոչընդոտման վերաբերյալ:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 12.04.2019թ. կնքվել է «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» և 15.04.2019թ. «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» ծածկագրերով կապալային աշխատանքների կատարման պայմանագրերը, որի համաձայն Կապալառուն (տվյալ դեպում՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Էջմիածին քաղաքի փողոցների շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման

աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինությունը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 10.05.2019թ. թիվ 13 գրությամբ հայտնել է, որ 12.04.2019թ. կնքված ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ընկերությունը մինչև 2019թ. մայիսի 7-ը պետք է կատարեր Էջմիածին քաղաքի փողոցների շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման կապալային 11 805 000 ՀՀ դրամի գումարային արժեքով աշխատանքներ, սակայն աշխատանքները ամբողջությամբ չեն կատարվել՝ 07.05.2019թ. դրությամբ իրականացվել են ընդամենը 4 105 235 ՀՀ դրամի գումարային արտահայտությամբ աշխատանքներ (հիմք՝ կապալառուի կողմից 02.05.2019թ. կատարողական ակտ), ուստի Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջները և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կողմից կազմված թիվ 1 արձանագրությունը, 2019թ. մայիսի 10-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է 12.04.2019թ. կնքված ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2 պայմանագիրը:

3. Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինությունը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 10.05.2019թ. թիվ 14 գրությամբ հայտնել է, որ 15.04.2019թ. կնքված ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3 ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ընկերությունը մինչև 2019թ. մայիսի 10-ը պետք է կատարեր Էջմիածին քաղաքի փողոցների շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման կապալային 11 385 000 ՀՀ դրամի գումարային արժեքով աշխատանքներ, սակայն պայմանագրով նախատեսված աշխատանքները 10.05.2019թ. դրությամբ նույնիսկ դեռ չեն սկսվել, ուստի Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջները և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կողմից կազմված թիվ 2 արձանագրությունը, 2019թ. մայիսի 10-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է 15.04.2019թ. կնքված ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3 պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8643-2019 գրությունը, Էջմիածնի համայնքապետարանի 15.05.2019թ. թիվ 1334 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 18.06.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700–րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

Նույն հոդվածի 2- մասի համաձայն՝ կապալի պայմանագիրը կնքվում է գրավոր:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կապալի պայմանագրի առանձին տեսակների (կենցաղային կապալ, շինարարական կապալ, նախագծային և հետազոտական աշխատանքների կապալ, պետական կարիքների համար կապալային աշխատանքներ) նկատմամբ կիրառվում են սույն պարագրաֆի դրույթները, եթե այլ բան սահմանված չէ

սույն օրենսգրքի՝ կապալի պայմանագրի համապատասխան տեսակների մասին կանոններով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 12.04.2019թ. կնքվել է «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/2» և 15.04.2019թ. «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» ծածկագրերով կապալային աշխատանքների կատարման պայմանագրերը (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն Կապալառուն (տվյալ դեպում՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվել է

Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Էջմիածին քաղաքի փողոցների շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Ընկերությունը պարտավորվել է կատարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (հետայսու նաև՝ աշխատանք): Աշխատանքների կատարման սկիզբ է սահմանվել 15.04.2019թ., իսկ ավարտ՝ 07.05.2019թ.:

Կողմերի միջև 02.05.2019թ. կնքված թիվ 1 ակտի համաձայն՝ Ընկերությունը 11 805 000 ՀՀ դրամ գումարային արժեքով աշխատանքներից կատարել է 4 105 235 ՀՀ դրամ գումարային արժեքով աշխատանքներ:

Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կողմից 02.05.2019թ. կազմվել է թիվ 1 արձանագրություն՝ Աշխատանքների գնման պայմանագրով սահմանված ժամկետների խախտման վերաբերյալ, համաձայն որի արձանագրվել է, որ Ընկերության կողմից պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները պետք է ավարտվեին 07.05.2019թ., սակայն մինչ օրս դեռ չի իրականացվել աշխատանքների նույնիսկ կեսը, ինչը ակնհայտ անհնարին է դարձնում որակով աշխատանքների իրականացումը մինչև պայմանագրով սահմանված վերջնաժամկետը և առաջարկվել է միակողմանի լուծել 12.04.2019թ. կնքված «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» պայմանագիրը:

Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինությունը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 10.05.2019թ. թիվ 13 գրությամբ հայտնել է, որ 12.04.2019թ. կնքված «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում Ընկերությունը մինչև 2019թ. մայիսի 7-ը պետք է կատարեր Էջմիածին քաղաքի փողոցների շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման կապալային 11 805 000 ՀՀ դրամի գումարային արժեքով աշխատանքներ, սակայն աշխատանքները ամբողջությամբ չեն կատարվել՝ 07.05.2019թ. դրությամբ նախատեսված 2969 քմ իրականացվել են միայն 987 քմ (հիմք՝ կապալառուի

կողմից 02.05.2019թ. կատարողական ակտ), ուստի Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջները և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կողմից կազմված թիվ 1 արձանագրությունը, 2019թ. մայիսի 10-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է 12.04.2019թ. կնքված ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2 պայմանագիրը:

Այսպիսով՝ Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Էջմիածին քաղաքի փողոցների շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ ծավալաթերթ-նախահաշվով, հստակ սահմանվել են այն աշխատանքներ, որոնք պետք է կատարվեր:

Պայմանագրի N 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, հստակ սահմանվել է աշխատանքների կատարման ժամկետը:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 07.05.2019թ.:

Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2019/56 ընթացակարգի քննության շրջանակներում հայտնել է, որ 2019թ-ի ապրիլ-մայիս ամիսներին գերակշռել են անձրևային-տեղումնաբեր օրերը, որոնք խոչընդոտել են Ընկերության կողմից աշխատանքների կատարմանը և որպես ապացույց Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոօդերևութաբանության և

մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության ՊՈԱԿ-ի 31.05.2019թ. թիվ 08-295 գրությունն ուղղված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին, համաձայն որի նշվել է հետևյալը.

Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում օդերևութաբանական դիտարկումներ չեն կատարվում: Տրամադրվում են 2019թ. ապրիլի 12-ից մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածի օրական տեղումների քանակի վերաբերյալ տեղեկատվությունն ըստ ԱԻՆ հիդրոօդերևութաբանության մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն ՊՈԱԿ-ի երևան ագրո (Մերձավան) օդերևութաբանական կայանի տվյալները:

Այսպիսով հաշվի առնելով, որ վերոհիշյալ գրության համաձայն՝ օդերևութաբանական դիտարկումներ չեն կատարվում Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում, ինչպես նաև նույն գրությամբ ներկայացված տեղումների քանակի վերաբերյալ տեղեկատվության անորոշ լինելը (նշված են միայն տեղումների քանակներ, առանց որևէ վերլուծության) հետևաբար Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հնարավորություն չունի գնահատելու, թե նշված նշված օրերին և նշված եղանակային պայմաններում արդյոք հնարավոր էր կամ ինչքանով էր հնարավոր իրականացնել աշխատանքները:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները. եթե՝

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) **Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)**:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջները և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կողմից կազմված թիվ 1 արձանագրությունը, 2019թ. մայիսի 10-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է 12.04.2019թ. կնքված «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» պայմանագիրը:

Ինչպես նաև Ընկերությունը «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» ծածկագրով պայմանագրի շրջանակներում մինչև 2019թ. մայիսի 10-ը պետք է կատարեր Էջմիածին քաղաքի

փողոցների շենքերի բակերի ճանապարհային ծածկույթի ասֆալտապատման փոսային նորոգման կապալային 11 385 000 ՀՀ դրամի գումարային արժեքով աշխատանքներ, սակայն պայմանագրով նախատեսված աշխատանքները 10.05.2019թ. դրությամբ ընդհանրապես չեն կատարվել, ուստի Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջները և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության կողմից կազմված թիվ 2 արձանագրությունը, 2019թ. մայիսի 10-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է նաև 15.04.2019թ. կնքված «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/3» պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն թույլ է տվել վերջինիս և Էջմիածնի համայնքապետարանի Բարեկարգում տնօրինության միջև 12.04.2019թ. կնքված «ՀՀ ԱՄԷՀԲՏ ԳՀ ԱՇՁԲ 19/2» և 15.04.2019թ. կնքված «ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 19/3» պայմանագրերով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրերի միակողմանի լուծմանը: Հետևաբար, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8643-2019 գրությամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**